– գտիչների հենարանների և սպասարկման մետաղական հարթակի իրականացում

– փոխմիացման հանգույցի վրա մետաղական տարրերով շվաքարանի իրականացում

– բետոնե հարթակի վրա գազահաշվիչի մետաղական արկղի իրականացում

– բետոնե հարթակների իրականացում

– հոտավորիչի պահպանման տարողության համար հորի իրականացում

– արտանետման մոմի հենարանի իրականացում

– փականների հիմքերի իրականացում

4. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

4.1. Ընդհանուր դրույթներ

Գազաբաշխիչ կայանը (այսուհետ՝ ԳԲԿ) նախատեսված է գազի բարձր ճնշումը մինչև տրված ճնշման իջեցնելու և այն որոշակի ճշգրտությամբ պահպանելու համար՝ անկախ բնական գազի սպառումից, ինչպես նաև գազը սպառողներին մատակարարելուց առաջ մաքրելու և ծախսը չափելու համար: ԳԲԿ բոլոր

սարքավորումները մինչև ելքի փականը նախատեսված են մուտքային գազատարի առավելագույն ճնշման համար:

Գազաբաշխիչ կայանը բաղկացած է հետևյալ հանգույցներից՝

- փոխմիացման հանգույց,
- գազի մաքրման հանգույց,
- գազի ճնշման կարգավորման հանգույց,
- գազի հաշվառման հանգույց,
- գազի հոսավորման հանգույց,
- սեփական կարիքների համար նախատեսված գազատար:

4.2. Փոխմիացման հանգույց

Գազը մուտք է գործում փոխմիացման հանգույց՝ մուտքային գազատարով: Կահավորված է գնդային փականով ձեռքի կառավարման: Այնուհետև գազը մուտք է գործում մաքրման հանգույց: Նախատեսված է շրջանցող գիծ, որը միացնում է մուտքային և ելքային գազատարները: Շրջանցող գիծը հնարավորություն է տալիս գազամատակարարումը սպառողին առանց ԳԲԿ մուտք գործելու: Շրջանցող գիծը կահավորված է 2 գնդային փականներով՝ եռակցումային և կցաշուրթային:

ԳԲԿ ելքային գազատարներում նախատեսված է գնդային փականներ ձեռքի կառավարման եռակցումային: Որպես ապահովիչ արմատուր փչամաքրման մոմի խողովակաշարի վրա տեղադրված է գնդային փական ձեռքի կառավարման եռակցումային: Իսկ ելքային գազատարի արտանետման մոմի վրա տեղադրված է ապահովիչ արտանետող փականներ: Բոլոր ապահովիչ արմատուրներից արտանետման մոմերը տեղադրվում են ԳԲԿ տարածքից դուր 10մ հեռավորության վրա:

Մուտքային և ելքային գազատարների վրա տեղադրվում են ներդիր էլեկտրամեկուսիչներ:

4.3. Գազի մաքրման հանգույց

Գազաբաշխիչ կայանի տեխնոլոգիական սարքավորումները ներառում են գազի մաքրման հանգույց: Մաքրման հանգույցը նախատեսված է գազի մաքրման համար

մեխանիկական մասնիկներից, խտուցքից և բաղկացած է 3 գազի մաքրման գծից (աշխատանքային և պահուստային): Գազի մաքրման հանգույցում նախատեսված է շրջանցող զիծ: Զտիչը իրենից ներկայացնում է պողպատյա տարրա ուղղահայաց դիրքով: Տարրայի մեջ տեղադրված է ֆիլտրոէլեմենտ Յմկմ չափով: Ֆիլտրոէլեմենտի սպասարկումը կատարվում է տարրայի վերնի բացովի կափարիչից: Զտիչը կահավորված է դիֆմանոմետրով 5000 Պա:

Խտուցքի և մեխանիկական մասնիկների առաջացումը կատարվում է գազի ֆիլտրոէլեմենտի միջով անցնելիս: Գոյացած խտուցքը հավաքվում է գտիչի ներքևի մասում և անհրաժեշտության դեպքում կատարվում է դատարկում փականների միջոցով: Դատարկման խողովակաշարը նախատեսվում է ստորգետնյա 0,005 թեքությամբ դեպի խտուցքահավաքիչը: Խտուցքահավաքիչի վրա տեղադրվում է արտանետման մոմ, որի վրա տեղադրված է փական ձեռքի կառավարման, և դատարկման խողովակ:

4.4. Գազի ճնշման իջեցման հանգույց

Գազի ճնշման իջեցման հանգույցը նախատեսված է գազի ճնշումը նվազեցնելու համար համապատասխան ցուցանիշներին: Ճնշման իջեցման հանգույցից №1 ելքային գազատարը կահավորված է 2 աշխատանքային և 1 շրջանցող գծերից: №2 ելքային գազատարը կահավորված են 2 աշխատանքային և 1 շրջանցող գծերից: Ճնշման իջեցման գծերը կահավորված են մուտքային և ելքային գնդային փականներով ձեռքի կառավարման եռակցումային: Ճնշման իջեցումը կատարվում է գազի առանցքային կարգավորիչներով: Գծերի փոխմիացումը կատարվում է մեխանիկական եղանակով:

4.5. Գազի հաշվառման հանգույց

ԳԲԿ տեխնոլոգիական հանգույցների խմբում ներառված են հաշվառման հանգույցներ բոլոր ելքերի համար: Նախատեսված է 3 չափիչ հանգույց՝ առաջին հանգույցը նախատեսված է հաշվառելու №1 ելքային գազատարի գազի ծախսը, իսկ երկրորդ հանգույցը՝ №2 ելքային գազատարի գազի ծախսը: №1 ելքային գազատարի համար նախատեսված հաշվառման հանգույցը բաղկացած են 2 չափիչ գծերից (ժպ 150 և

ժայ 200): №2 ելքային գազատարի համար նախատեսված հաշվառման հանգույցը բաղկացած է 1 չափիչ գծից (ժայ 300): Հաշվառման հանգույցը նախատեսված է Նախագծվող նախատեսվում է №3 ելքային գազատարի համար, բաղկացած է 1 հաշվառման հանգույցից (ժայ 80):

Գազի հոսքի չափման №1 և №2 գծերը կատարվում են փոփոխական ճնշման տարբերության մեթոդի փոփոխությունների հիման վրա՝ օգտագործելով FloBoss հոսքի կարգավորիչը, հազեցած մուտքի և ելքի փականներով:

«FloBoss» ծախսաչափը՝ ինքնավար կոմպակտ միկրոպրոցեսորային սարք է, որը նախատեսված է գազի հաշվառման, պրոցեսի ավտոմատացման և տվյալների պահպանման համար: «FloBoss» ծախսաչափը հաշվառումը իրականացնում է համաձայն՝ ГОСТ 8.586.1 2005, ГОСТ 8.586.2-2005, ГОСТ 8.586.3-2005, ГОСТ 8.586.4-2005, ГОСТ 8.586.5-2005 «Измерение расхода и количества жидкостей и газов с помощью стандартных сужающих устройств» պահանջներին:

Տեղադրված է «RA-Elcor» հաշվիչ գազի ծախսի հաշվառման №3 ելքային գազատարի համար:

«RA-Elcor» ռոտացիոն հաշվիչի աշխատանքի սկզբունքը կայանում է պտտվող ռոտորներով անցնող գազի ծավալը հստակ չափաքանակով: Ծավալի չափաքանակը համարվում է հաշվիչի չափիչ խցիկի ծավալը, որը ձևավորվում է կորպուսի ներքին հարթությամբ և 2 հակադարձ ուղղություններով պտտվող ռոտորների մակերևույթով:

4.6. Գազի հոտավորման հանգույց

ԳԲԿ-ում նախատեսված է հոտավորման հանգույց, որը կահավորված է ստորգետնյա մատակարարման տարրայով: Օդորանտը մուտք է գործում ելքային գազատարեր №1՝ ծախսի քանակին համապատասխան, գազի հոտավորման ավտոմատ համակարգի միջոցով (այսուհետ ԳՀԱՀ): Ելքային գազատար №1-ը կահավորված է ստորգետնյա մատակարարման տարրայով, որտեղից օդորանտը մուտք է գործում գազատար:

ԳՀԱՀ-ն նախատեսված է մայրուղային գազատարների գազաբաշխիչ կայաններում բնական գազի հոսքին հոտավորիչ նյութերի մատակարարման համար: ԳՀԱՀ-ն վերահսկում է օդորանտի հոսքը հիմնական գիծ, մատակարարման տարայում օդորանտի մակարդակի վերահսկում, գազի հոտավորման աստիճանի չափում, ինչպես նաև հաշվարկում մատակարարված չափաբաժինների քանակը և սպառված հոտավորիչ նյութի քաշը որոշակի ժամանակային ընդմիջումով:

ԳՀԱՀ-ի մատակարարման բաքերի լիցքավորման համար նախատեսված է ստորգետնյա հոտավորման տարրա: Տարրայի վրա տեղադրված է սպասարկման հոր:

Թիվ №4 հարակից շինությունում տեղադրված է արդյունաբերական գազի անալիզատոր АО2М-01, որը չափում է թթվածնի ծավալային բաժինը և մերկապտանների զանգվածային կոնցենտրացիան էթիլմերկապտանի միջոցով: Գազի անալիզատորի պոլիէթիլենային նմուշառման խողովակաշարը պետք է միացված լինի ԳԲԿ-ից թիվ №1 ելքային գազատարին, գազատարի հետագծի երկայնքով առնվազն 150D հեռավորության վրա: Գազի անալիզատորի հետադարձ խողովակաշարը պետք է միացված լինի ԳԲԿ տարածքից դուրս թիվ №1 ելքային գազատարին 3.0 մ-ից ոչ ավելի հեռավորության վրա: Սարքը (գազի անալիզատոր АО2М-01) տեղադրված է թիվ №4 օժանդակ շինությունում:

4.7. Տեխնոլոգիական խողովակաշար և միացման դետալներ

Հիմնական նշանակության մուտքային տեխնոլոգիական գազատարի անցկացումը ԳԲԿ տարածքում մինչև մուտքի փականն իրականացվում է ստորգետնյա եղանակով, հետո տեխնոլոգիական գազատարների անցկացումը ստուգման և սպասարկման հեշտության համար իրականացվում է վերգետնյա մետաղական հենարանների վրա:

Գազի (կոնդենսատի) մաքրման արտադրանքները ստորգետնյա տարայի մեջ ջրահեռացման խողովակաշարի տեղադրումը կատարվում է ստորգետնյա:

Հոտավորման հանգույցի խողովակաշարերի անցկացումը դեպի ստորգետնյա տարա իրականացվում է ստորգետնյա եղանակով:

ԳԲԿ տարածքում խողովակաշարերի դասավորությունը ներկայացված է գրաֆիկական բաժնում:

Գազատար խողովակների և միացման դետալների որոշված տրամագծերը ապահովում են խողովակում 25 մ/վ գազի արագություն:

Կատարված ուժի հաշվարկներին համապատասխան, ընդունված խողովակների պատերի հաստությունները և նյութերը ապահովում են շահագործման և փորձարկման ընթացքում հուսալիության և ամրության պահանջներին համապատասխանությունը:

ԳԲԿ-ի հանգույցների շինարարության համար ընդունված են պողպատե եռակցված ուղղակար խողովակներ ԳՕՍՍ 20295-85, պողպատե անկար շիկադեֆորմացված (горячедеформированные) խողովակներ ԳՕՍՍ 8732-78՝ պատրաստված կռած կամ գլոցած (кованной или катанной) նախաշինվածքից և պողպատե եռակցված ուղղակար խողովակներ ԳՕՍՍ 10704-91:

Անկար խողովակների մատակարարումը իրականացվում է գործարան-արտադրողի կողմից, հիդրոփորձարկման երաշխիքով, որակի 100% ստուգումով չքայքայող մեթոդներով համաձային СНиП 2-05-06-85* ըստ հարվածային մածուցիկության (ударная вязкость):

Խողովակաշարերի ստորգետնյա և վերգետնյա տեղադրման համար ընդունված են հետևյալ դետալները՝

- անկար եռակցված հավասարանցումային և անցումային (бесшовные приварные равнопроходные и переходные) եռաբաշխիկ ըստ ԳՕՍՍ 17376 2001;
- եռաբաշխիկ շտամպաեռակցված 530(10K50)-325(8K42)-5.5-0.6-У, 530(10K50)-219(6K42)-5.5-0.6-У;
- 3Д տիպի կտրուկ ծոված արմունկ (отводы крутоизогнутые) ըստ ԳՕՍՍ 17375-2001;
- Էլիպսաձև խցափակիչ ըստ ԳՕՍՍ 17379-2001;
- Համակենտրոն անցումներ (переходы концентрические) ըստ ԳՕՍՍ 17378-2001.

Բոլոր միացման դետալները նախատեսված են գործարանային արտադրության: Բոլոր միացումները կատարվում են եռակցումով և կցաշուրթային տարբերակով, որտեղ առկա է արմատուր, առանձին դեպքերում չկազմատվող դետալներով:

Էլեկտրական պոտենցիալները տարանջատելու համար մուտքային և ելքային գազատարների վրա տեղադրվում են ներդիր էլեկտրամեկուսիչներ:

4.8. Աշխատանքների կատարման պահանջները

Բոլոր հիմնական խողովակաշարերը, որոնք տեղադրված են շինությունների մեջ և ԳԲԿ տարածքում, և նախատեսված են բնական գազի տեղափոխման համար, ու ծառայում են հիմնական գործընթացին, համարվում են ԳԲԿ հիմնական տեխնոլոգիական խովակաշար և հանդիսանում են «B» կատեգորիայի: Դրանց վրա տարածվում են՝ նախագծման համար՝ СП 36.13330.2012, իսկ շինարարության համար СП 86.13330.2014:

Մոնտաժային աշխատանքները, որակի կառավարումը, փորձարկումը և հանձնումը շահագործման կատարվում են համաձայն՝ СНиП III-42-80, ВСН 006-89, ВСН 011-88, ВСН 012-88 часть I պահանջներին:

Օժանդակ խողովակաշարերի մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն СНиП 3.05.05-84 պահանջներին:

Խողովակաշարերի մեկուսացումը կատարված է համաձայն՝ ТУ 5774-008-32989231-2016 պահանջների:

Եռակցակարերի, միացման դետալների, խողովակների, ստորգետնյա տարրաների, գազատարի ստորգետնյա մասի և ստորգետնյա-վերգետնյա անցումների ժամանակ վերգետնյա մասը մինչև 400մմ մեկուսացում «PAM» տիպի հակակոռոզիոն ամրանավորված մածիկային ժապավենով,

Վերգետնյա խովակաշարերը և սարքավորումները պաշտպանվում են մթնոլորտային կոռոզիայից երկտակ ներկումով՝ 1 շերտ XC-010 ГФ-021 գրունտային ներկով, որը իրենից ներկայացնում է մարաթեկային սուլպենգիա ակրիլային նյութից, և

և մեկ շերտ հակակոռոզիոն ներկով 0.2մմ հաստությամբ, համաձայն՝ ПАО «Газпром» կազմակերպության շահագործմանը:

Խողովակաշարերը և սարքավորումները մոնտաժումից հետո, պետք է կրկնակի փչամաքրվեն, և փորձարկվեն ամրության և հերմետիկության համար հիդրավլիկ եղանակով, համաձայն BCH 011-88 պահանջներին:

Ջերմաստիճանի մինուսային ժամանակաշրջանում արգելվում է փորձարկել հիդրավլիկ եղանակով:

Խողովակաշարերի ամրության և արտահոսքի ստուգման կարգը սահմանվում է շինարարական և տեղադրման կազմակերպության կողմից Հաճախորդի հետ համատեղ մշակված հատուկ հրահանգներով:

Այն վայրերում, որտեղ խողովակաշարերը հենվում են հենարանների վրա, խողովակաշարերի էլեկտրական մեկուսացումն ապահովելու համար տրամադրվում են միջադիրներ:

Ստորգետնյա տարրաները տեղադրելուց հետո, մոնտաժային աշխատանքների ավարտից հետո, փորձարկումից և մեկուսացումից հետո, կատարել խրամուղու ետլիցք:

Խրամուղու ետլիցքը կատարել 2 փուլով՝ 0.1մ խողովակի տակ, այնուհետև խողովակի տեղադրումից հետո՝ ետլիցք մինչև վերջ:

4.9. Ապամոնոտաժման աշխատանքների արտադրություն

Նախքան շինարարական աշխատանքներ իրականացնելը, ապամոնոտաժել 1-ին աղյուսակում թվարկված գործընթացային սարքավորումները:

Աղյուսակ 1

| № | Անվանումը | Քանակ, հատ | Ծանոթություն |
|-----|---|---------------|--------------|
| 1. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 400 | 33.5 | |
| 2. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 300 | 73.5 | |
| 3. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 200 | 55.0 | |
| 4. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 150 | 5.0 | |
| 5. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 100 | 61.5 | |
| 6. | Խողովակի ապամոնոտաժում Dպ 80 | 3.0 | |
| 7. | Փականի ապամոնոտաժում Dպ 300 | 5 | |
| 8. | Փականի ապամոնոտաժում Dպ 200 | 17 | |
| 9. | Փականի ապամոնոտաժում Dպ 150 | 5 | |
| 10. | Փականի ապամոնոտաժում Dպ 100 | 2 | |
| 11. | Փականի ապամոնոտաժում Dպ 50 | 2 | |
| 12. | Գոյություն ունեցող գազի ռոտացիոն հաշվիչի RABO G-100 ապամոնոտաժում | 1 | |
| 13. | Գազի ճնշման կարգավորչի ապամոնոտաժում Dպ 150 | 2 | |
| 14. | Գազի ճնշման կարգավորչի ապամոնոտաժում Dպ 100 | 2 | |
| 15. | ԱԱՓ ապամոնոտաժում Dպ 100 | 4 | |
| 16. | Խցավոր դիաֆրագմայի ապամոնոտաժում Dպ 300 | 1 | |
| 17. | Խցավոր դիաֆրագմայի ապամոնոտաժում Dպ 200 | 1 | |
| 18. | Հոտավորման համակարգի ապամոնոտաժում | 1 | |
| 19. | Ստորգետնյա հոտավորման բաքի ապամոնոտաժում | 1 | |
| 20. | Զտիչների ապամոնոտաժում | 2 | |
| 21. | Ձևավոր մասերի ապամոնոտաժում, կգ | 1029.1 | |

5. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՄՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

Արարատի ԳԲԿ-ն հազեցած է երեք հոսքաչափ միավորներով: Գազի հոսքի չափում գծի վրա, №1 և №2 ելքի գծի վրա գազի սպառման չափումն իրականացվում է «FloBoss 107» մեկ բազմագիծ գազի հոսքաչափով, իսկ №3 ելքի համար նախատեսված գծի վրա գազի հոսքի չափումը իրականացվում է RA-ELCOR G-100 գազի հաշվիչով: Արտաքին կլիմայական և բնական գործոնների ազդեցությունը կանխելու համար «FloBoss 107» կարգավորիչը տեղադրվում է հատուկ ջեռուցվող և օդափոխվող սենյակում, որը գտնվում է չափիչ խողովակաշարերի վերևում: Գազի հոսքի չափումը №1 գազի ելքի ուղղությամբ իրականացվում է երկու չափիչ խողովակաշարով՝ Dy150 և Dy200, իսկ №2 գազի ելքի ուղղությամբ իրականացվում է մեկ չափիչ խողովակաշարով՝ Dy300, բոլոր չափիչ խողովակաշարերի վրա, դիֆրագմներից հետո, կան պարկուճներ ջերմաստիճանի տվիչ տեղադրելու համար: Ջերմաստիճանի տվիչը տեղադրված է չափման մեջ ներգրավված չափիչ խողովակաշարի վրա: Մալուխի և պաշտպանիչ մետաղական պարկուճի երկարությունը տրվում է՝ հաշվի առնելով ջերմաստիճանի տվիչի տեղադրումը ամենահեռավոր չափիչ խողովակաշարի վրա:

- Կոնտրոլլերի համար պատրաստված հողանցման կոնտուրը պարտադիր պետք է ստուգվի լիցենզավորված կազմակերպության կողմից պաշտոնական փաստաթղթի տրամադրումով տվյալ կոնտուրի գործարկման հնարավորությամբ:

- Ճնշման և ջերմաստիճանի կառավարումը կատարվում է մանոմետրերի և ջերմաստիճանների օգնությամբ: Մանոմետրերը տեղադրվում են մուտքային և ելքային կոլեկտորների վրա:

- ԳԲԿ-ում ճնշման վերահսկումը կատարվում է նաև ցուցադրող մանոմետրերով, որոնք տեղադրված են՝ մուտքային գազատարի վրա, ԳԲԿ շրջանցող գծի վրա, կարգավորման հանգույցի մուտքային և ելքային խողովակաշարերի վրա, հաշվառման հանգույցի մուտքային և ելքային կոլեկտորների վրա: Ելքային գազատարերի վրա տեղադրվում են ցուցադրող, պայթյունաանվտանգ ազդարարող մանոմետրեր:

ՈՒՇԱՊՐՈՒԹՅՈՒՆ!

- 2D երկարությամբ չափիչ խողովակաշարի հատվածների ներքին մակերեսը դիաֆրագմայի սկզբում և վերջում (միջինացման խցի կորպուս) պետք է մաքրվի անհարթություններից, ծլեպից և այլն մեխանիկական մշակումով: Նախքան չափիչ խողովակաշարին եռակցմանը, տվյալ հատվածների ներքին տրամագիծը պետք է համապատասխանի ԳՕՍՏ 8.586.2-2005 կետ 6.4.1-ի պահանջներին:
- «Floboss-107» չափիչ կայանի հողանցման հաղորդաշղթան չմիացնել սենքի ընդհանուր հողանցման հաղորդաշղթային:

6. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ՇԱՆԹԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈՂԱՆՑՈՒՄ

Այս նախագծի աշխատանքային փաստաթղթերը էլեկտրամատակարարման համակարգի վերաբերյալ մշակվել են գործող նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան:

Բաշխիչ վահանակի արտաքին էլեկտրամատակարարումը իրականացվում է գոյություն ունեցող հենասյունից: Միացումը իրականացվում է 0.23 կՎ լարման ցանցից: Միացման տեղից մինչև բաշխիչ վահանակ նախատեսվում է կառուցել մալուխային գիծ (ՄԳ): Մալուխային գիծը իրականացված է BBΓHT-LS 2x16 մմ² մակնիշի մալուխով, որը անցկացվում է 0.8 մ խորությամբ խրամուղում՝ Ø40մմ պոլիէթիլենային խողովակի մեջ, որի երկարությունը կազմում է 70մ:

Գազաբաշխիչ կայանի էլեկտրամատակարարումն ապահովելու համար ըստ հուսալիության 1-ին կատեգորիայի, անհրաժեշտ է ունենալ էլեկտրաէներգիայի երկու անկախ աղբյուր: Հիմնական աղբյուր ընտրված է 0.23 կՎ մալուխային գիծը:

ԳԲԿ-ի տարածքի պահուստային էլեկտրամատակարարման համար նախատեսված է էլեկտրական հոսանքի բենզինային գեներատոր 8 կՎտ հզորությամբ, անցումը հիմնական էլեկտրամատակարարումից պահուստայինի իրականացվում է

ավտոմատ կերպով, օգտագործելով ABP: Բաշխիչ վահանակը և դիզելային գեներատորը տեղադրված են օժանդակ սենյակ №3-ում:

Բաշխիչ վահանակում նախատեսվում է Эталон ШИТ-100 ինքնավար հրդեհաշիջման համակարգի տեղադրում (բաշխիչ վահանակի հրդեհային անվտանգությունն ապահովելու համար):

Օժանդակ սենյակ №1-ի, օժանդակ սենյակ №2-ի, օժանդակ սենյակ №3-ի, սանհանգույցի և օպերատորի սենյակի ներքին էլեկտրամատակարարումը իրականացվում է պոնձե մալուխով, որը տեղադրվում է սակառի մեջ, իսկ արտաքին էլեկտրամատակարարումը՝ խրամուղում խողովակի մեջ:

ԳԲԿ-ի տարածքի արտաքին լուսավորության համար տեղադրվում են լուսադիոդային լուսատուներով մետաղական հենասյուններ:

Ճնշման կարգավորման հանգույցի շինության, ծախսաչափի շինությունում, օժանդակ սենյակ № 4-ում և շվաքարանում տեղադրվում են պայթյունապաշտպան լուսադիոդային լուսատուներ, որոնց սնուցումը իրականացվում է այրմանը չնպաստող BBГHT-FRLS տիպի մալուխով:

ԳԲԿ-ի տարածքում վերանորոգման աշխատանքների կատարման ժամանակ վթարային լուսավորության համար նախագծով նախատեսված է շարժական լապտեր պայթյունապաշտպան կատարմամբ:

ԳԲԿ-ի տարածքում նախագծվող օբյեկտների շանթապաշտպանության կառուցվածքը պատկանում է շանթապաշտպանության 2-րդ դասի հատուկ օբյեկտներին: Կայծակի ուղիղ հարվածներից պաշտպանության հուսալիության մակարդակը ընդունված է 0.99:

Տեխնոլոգիական սարքավորումների պաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից իրականացվում է 21մ բարձրությամբ M1-M4 շանթարգելների միջոցով:

M1-M4 շանթարգելների պաշտպանության գոտին ներառում է սարքավորումներ, որոնք նորմալ տեխնոլոգիական ցիկլի ընթացքում լցված են դյուրավառ գազերի արտանետումներով:

Պաշտպանության գոտու բարձրությունը.

- արտանետման մոմի բարձրությունը- $H=5$ մ;

պայթյունավտանգ գոտի - 5մ ուղղահայաց և հորիզոնական; $h_{x1}=10$ մ;

-արտանետման մոմի բարձրությունը - $H=3$ մ;

պայթյունավտանգ գոտի - 5մ ուղղահայաց և հորիզոնական; $h_{x2}=8$ մ;

-կցաշուրթային միացությունների և փականների բարձրությունը - $H=2.1$ մ;

պայթյունավտանգ գոտի - 3մ ուղղահայաց և հորիզոնական; $h_{x3}=5.1$ մ;

-կցաշուրթային միացությունների և փականների բարձրությունը - $H=1.6$ մ;

պայթյունավտանգ գոտի - 3մ ուղղահայաց և հորիզոնական; $h_{x4}=4.6$ մ;

Շանթարգելի հողանցման կոնտուրի դիմադրությունը տարվա ցանկացած ժամանակահատվածում չպետք է գերազանցի 10 Օհմ-ը:

ԳԲԿ-ի տարածքում հողի տեսակարար էլեկտրական դիմադրությունը կազմում է 30 Օմ-մ:

Պաշտպանիչ հողանցման կոնտուրները կազմված են`

- ուղղահայաց հողակցիչներից, պատրաստված 50x50x5մմ 2 մ երկարությամբ անկյունային պողպատից համաձայն` ԳՕՍՏ 8509-93:

- հորիզոնական հողակցիչներից, պատրաստված 40x4մմ շերտավոր պողպատից համաձայն` ԳՕՍՏ 103-2006, որոնք տեղադրվում են խրամուղում 0.6 մ խորության վրա:

Հողանցման բոլոր միացումները կատարվում են եռակցման միջոցով:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ПУЭ, 7-րդ հրատարակչության:

7. ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

7.1. Ընդհանուր դրույթներ

Սույն նախագծային փաստաթուղթը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն:

Նախագծային փաստաթղթերը մշակվել են ճարտարապետական լուծումներին և ընթացիկ տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

Նախագծային փաստաթղթերում ընդունված տեխնիկական լուծումները մշակվել են Հայաստանի Հանրապետության գործող կարգավորող փաստաթղթերի պահանջներին համապատասխան.

- СНРА IV-12.02.01-04 "Отопление, вентиляция и кондиционирование воздуха";
- СНиП 41-01-2003 "Отопление, вентиляция и кондиционирование";
- СНиП II-35-76 котельные установки;
- ГОСТ 30494-96 "Здания жилые и общественные. Параметры микроклимата в помещениях".

Կառույցը գտնվում է չոր կլիմայական գոտում՝ համաձայն СНРА -II-7.02-95:

Ջեռուցման նախագծման համար արտաքին օդի հաշվարկված պարամետրերը ընդունված են ՀՀՇՆ IV-12.02.01-04 համաձայն:

Ներքին օդի հաշվարկված պարամետրերը ընդունվում են տարածքի նպատակին համապատասխան՝ գործող նորմերին և կանոններին համապատասխան:.

Ջերմամեխանիկական լուծումներ - պատին ամրացվող գազի կաթսա՝ 24 կՎտ հզորությամբ:

Աշխատանքային գծազրեքում ընդունված տեխնիկական լուծումները համապատասխանում են շրջակա միջավայրի, սանիտարահիգիենիկ, հրդեհային անվտանգության և այլ կիրառելի նորմերի ու կանոնների պահանջներին և ապահովում են օբյեկտի անվտանգ շահագործումը մարդկանց կյանքի և առողջության համար՝ նախագծով նախատեսված միջոցառումներին համապատասխան:

Ջեռուցման համակարգի անվտանգության փականները նախատեսված են կաթսայի համակարգում:

Կաթսայատունը նախագծված է այնպես, որ ապահովի սարքավորումների կառավարման, սպասարկման, տեղադրման և ապամոնիտաժման հասանելիություն՝ համաձայն օգտագործվող սարքավորումների անձնագրերի և շահագործման հրահանգների: Ջեռուցման համակարգի տեղադրումը և շահագործման հանձնումը պետք է իրականացվի ՇՀԽՓ 3.05.03-85-ի համաձայն:

Ջեռուցման համակարգերի հաշվարկման համար ներքին օդի նախագծային պարամետրերը ընդունվում են CHPA IV-12.02.01-04, ՇՀԽՓ 41-01-2003 հիման վրա գործող ստանդարտներին համապատասխան և կազմում (տարածքների հիմնական ֆունկցիոնալ խմբերի համար) են՝

- տեխնիկական շինություն (+5°C),
- ծախսաչափի շինություն (+5°C),
- օպերատորի սենյակ (+22°C),
- սանհանգույց (+18°C):

7.2. Տեղեկատվություն ջերմամատակարարման աղբյուրների, ջեռուցման համակարգերի ջերմատարերի պարամետրերի մասին

Ջեռուցման համակարգի ջերմակիրը «Thermogent-65» տեսակի չսառեցնող հեղուկ է՝ ջեռուցման կարիքների պարամետրերով՝ $T_1 - T_2 = 80 - 60^\circ\text{C}$:

Ջեռուցման համար ջերմային սպառումը որոշվում է ՇՀԽՓ 41-01 և ՇՀԽՓ 23-02 հաշվարկներով՝ հիմնվելով ջերմության կորստի փոխհատուցման և չֆիլտրացված արտաքին օդի ջեռուցման պայմանների վրա:

Ջերմային էներգիայի կորուստները նվազագույնի հասցնելու և սպասարկող անձնակազմի այրվածքների հնարավորությունը բացառելու համար սառեցնող հեղուկի խողովակաշարերը ծածկվում են ջերմամեկուսացման շերտով:

Տեխնիկական պայմաններին համապատասխան նախագծվել է ջեռուցման համակարգ. երկու խողովակային ջեռուցման համակարգ՝ սառեցնող հեղուկի հարկադիր շրջանառությամբ, ստորին բաշխում (հարկադիր):

Պոլիպրոպիլենային խողովակները օգտագործվում են որպես ռադիատորների ջեռուցման խողովակներ:

Ռադիատորը միացված է պատի կողքին: Ջեռուցման սարքերի ջերմային էլքը կարգավորելու և դրանք անջատելու համար օգտագործվում է անջատիչ և կարգավորիչ փականների հավաքածու:

Օդը ջեռուցման համակարգից հեռացվում է ռադիատորի վերին մասում տեղադրված ձեռքով օդափոխման անցքերի (ծորակների) միջոցով:

Որպես հիմնական ջեռուցման սարք օգտագործվում են կողային միացմամբ (500 մմ) պողպատե հատվածային ռադիատորներ:

Հոսքի չափիչ սենյակի օդափոխությունն ապահովվում է մշտական, ընդհանուր փոխանակմամբ, մատակարարմամբ և արտանետմամբ, բնական եղանակով (Ժամում 3 ծավալ): Օդի ներհոսքը կատարվում է դռան ստորին մասում գտնվող ճաղավանդակավոր ճաղերի միջոցով: Օդի արտանետումը կատարվում է հոսքի չափիչ սենյակի տանիքին տեղադրված արտանետման դեֆլեկտորի միջոցով:

8. ԷԼԵԿՏՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արարատ ԳԲԿ-ի կապիտալ նորոգում» օբյեկտի էլեկտրաքիմիական պաշտպանության մասը մշակվել է՝ հաշվի առնելով հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ԳՕՍՍ P 51164-98 «Հիմնական պողպատե խողովակաշարեր. Կոռոզիայից պաշտպանության ընդհանուր պահանջներ»,
- ԳՕՍՍ 9.602-2016 «Ստորգետնյա կառույցներ. Կոռոզիայից պաշտպանության ընդհանուր պահանջներ,

- СТО Газпром 9.0-001-2009 «Կոռոզիայից պաշտպանություն. Հիմնական դրույթներ»,
- СТО Газпром 9.2-002-2009 «Կոռոզիայից պաշտպանություն: Էլեկտրաքիմիական պաշտպանություն կոռոզիայից: Հիմնական դրույթներ»,
- СТО Газпром 9.2-003-2020 «Կոռոզիայից պաշտպանություն: Ստորգետնյա կառույցների էլեկտրաքիմիական պաշտպանության նախագծում»,
- ПУЭ «Էլեկտրական կայանքների տեղադրման կանոններ»:
- УПР.ЭХЗ-01-2013, УПР.ЭХЗ-02-2013 «Унифицированные проекты решения по электрохимической защите подземных коммуникаций. Альбом 1»
- УПР.ЭХЗ-01-2013, УПР.ЭХЗ-02-2013 «Унифицированные проекты решения по электрохимической защите подземных коммуникаций. Альбом 2».

Տեխնիկական պայմաններին համապատասխան իրականացվել են էլեկտրամետրիկ հետազոտական և չափագրման աշխատանքներ՝ նախագծելու ԳԲԿ-ի էլեկտրաքիմիական պաշտպանության (ԷՔՊ) համակարգը:

ԳԲԿ-ի տարածքում պողպատե ստորգետնյա գազատարերի, խտուցքահավաքիչ բաքի և հոտավորիչի մատակարարման բաքի պաշտպանությունն իրականացվում է ПМ-20У տիպի պրոտեկտորով:

ԳԲԿ-ի ստորգետնյա գազատարերի պաշտպանությունը կոռոզիայից իրականացվում է կաթոդային պաշտպանության կայանի միջոցով:

ԳԲԿ-ի մուտքի գաղատարի վրա իրականացվում է էլեկտրամեկուսիչ ներդիրի ապամոնտաժում և տեղադրում (ԲՅԻ)՝ հսկիչ-չափիչ կետ համատեղ պաշտպանության բլոկով (ՀՉԿ-1):

ԳԲԿ-ի ելքի №1 և №2 գազատարերի վրա իրականացվում է էլեկտրամեկուսիչ ներդիրների ապամոնտաժում և տեղադրում (ԲՅԻ)՝ հսկիչ-չափիչ կետ ՀՉԿ-2-ով և ՀՉԿ-3-ով, իսկ ԳԲԿ-ի ելքի №1 գազատարի վրա տեղադրվում է նոր էլեկտրամեկուսիչ ներդիր (ԲՅԻ)՝ հսկիչ-չափիչ կետ ՀՉԿ-4-ով:

Էլեկտրամեկուսիչ միացությունների (БЭИ) տեղադրումը և շահագործումը պետք է իրականացվի «Գազատարների էլեկտրամեկուսիչ ներդիրների օգտագործման ուղեցույցի» համաձայն:

Հսկիչ-չափիչ կետերը կահավորված են ЭНЕС-4МС տիպի երկարատև գործող պղնձարջասպե համեմատության էլեկտրոդներով՝ ներկառուցված օժանդակ (կամ համարժեք) էլեկտրոդներով: Էլեկտրոդը մշտապես տեղադրվում է գետնին՝ խողովակաշարի կողային մակերևույթից 0.1 մ հեռավորության վրա, կոմունիկացիայի ստորին մակարդակով, բայց ոչ ավելի, քան հողի սեզոնային սառեցման խորությունը:

Հոսավորիչի մատակարարման բաքի պրոտեկտորային պաշտպանության մալուխները միացվում են հսկիչ-չափիչ կետին (ՀՉԿ-5):

Խտուցքահավաքիչի պրոտեկտորային պաշտպանության մալուխները միացվում են հսկիչ-չափիչ կետին (ՀՉԿ-6):

ԳԲԿ-ի ստորգետնյա գազատարների կոռոզիոն վիճակի ստուգման համար տեղադրվել են հսկիչ-չափիչ կետեր՝ ՀՉԿ-7,8,9:

Մալուխային գծերը տեղադրել 0.7մ խորության վրա: Այս նախագծում օգտագործվել են ВВГ 2x6մմ² կտրվածքներով մալուխներ:

Բոլոր մալուխային ելքերը միացված են անմիջապես խողովակաշարին, օգտագործելով տերմիտային եռակցում:

Էլեկտրաքիմիական պաշտպանության մալուխի խողովակաշարին միացման կետերի մեկուսացումն իրականացվում է խողովակաշարի մեկուսացման հետ համատեղելի նյութերի միջոցով: Մեկուսացումը վերականգնելու հրահանգներ այն հատվածներում, որտեղ մալուխները եռակցվում են խողովակաշարերին - նկ. УПР.ЭХЗ-01-2013-07-002:

Վերգետնյա սարքավորումները և խողովակաշարերը փորձարկումից հետո պետք է նախաներկել և ներկել 2 անգամ: Ծածկույթը պետք է ընդունվի СП 36.13330.2012-ի 14.3 բաժնի համաձայն:

Գազաբաշխման կայանի կապիտալ նորոգման հետ կապված նախագծով
նախատեսվում է ԿՊԿ կայանի վերատեղադրում:

ՀՀ Արարատի մարզի Արարատ ԳԲԿ

Ինժեներաերկրաբանական եզրակացություն

1. Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատ վարչական տարածքի հյուսիս-արևմտյան մասում:

2. Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

— Նախկինում տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական և գիտա-արտադրական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների հաշվետու նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում:

— Հավաքած նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

3. Շրջանն ունի չոր ցամաքային, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմա:

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 42°C :

Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -32°C :

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 200 մմ:

Գերակշռում են 1.9 մ/վրկ արագության հյուսիսային ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 25 մ/վրկ արագության (ուժգնության) քամիներ:

Ջրան ծածկոցի հաստությունը հասնում է 40 սմ, ճնշումը՝ 50 կգ/մ²:

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 37 սմ:

4. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արարատյան լճալյուվիալ հարթավայրի սահմաններում, նրա արևելյան մասում: Ռելիեֆը հարթ է, մակերևույթի ընդհանուր թեքությամբ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 841.0-841.0 - մետրեի սահմաններում:

5. Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին չորրորդական հասակի տրավերտիններով, որոնք ծածկված են ժամանակակից դելյուվիալ, լճային, ալյուվիալ խճավազային, կավավազային գոյացումներով: Ստորև տրվում է գազատարի նկարագրությունը և երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների արժեքները:

0.0-0.5 լիցքային գրունտ, 23-1, աղ.101 (ՀՀՇՆ 32-01-2022), II կարգ, $\rho-1800\text{կգ/մ}^3$

0.5

0.5-1.3 խառնաքար և փշրաքար, 16-2, աղ.101 (ՀՀՇՆ 32-01-2022), V կարգ, $\rho-2100\text{կգ/մ}^3$

1.3

1.3-2.0 տրավերտին, 14-2, աղ.101 (ՀՀՇՆ 32-01-2022), V կարգ, $\rho-2300\text{կգ/մ}^3$

0.7

6. Հիդրոերկրաբանական տեսակետից հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 10.0 մետրից խորը:

7. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները՝ սողանք, կարստ, փլուզում և այլն, ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

8. Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 շրջանը և տեղամասը մտնում են I սեյսմիկ գոտու մեջ ($A_{\max} = 0.3g$): Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը (K_0) ըստ թիվ 4 աղյուսակի կկազմի 1.1: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արա-գացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝

$$A_{\max} = 0.3g \times 1.1 = 0.33g$$

9. Միաժամանակ նշում ենք, որ սույն եզրակացությունը հիմնականում կազմվել է ֆոնդային և տարածքի տեղազննման նյութերի հիման վրա, ուստի փաստացի գոյություն ունեցող երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի և սույն եզրակացության մեջ տրված նկարագրության միջև հնարավոր են որոշ անհամապատասխանություններ, որոնք կճշտվեն շինարարական խրամուղիները փորելուց հետո ինժեներ-երկրաբանի կողմից դրանց զննման ակտը կազմելու ժամանակ:


Գրականության ցանկ

1. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր ՀՀՇՆ 20.04-2020
2. Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011
3. Строительные нормы и правила. Сборник 1. Земляные работы. СНиП IV-2-82
4. Асланян А.Т. Региональная геология. "Айпетрат", Ереван, 1956.
5. Отчет о результатах изысканий подземных вод на центральном участке Араратской котловины Армянской ССР. Ереван 1966г. Геологический фонд РА.
6. Отчет. Четвертичные отложения Араратской депрессии. По работам 1959г. Ереван 1960г. Геологический фонд РА.
7. Демехин А.П.. Подземные воды Араратской котловины. Геологическая характеристика Араратской котловины. Ереван 1960г. Фонды АН АрмССР ИГН 1946г.
8. Հաշվետվություն Արարատյան գոգավորության Արտաշատի իջվածքի հիդրոերկրաբանական մանրակրկիտ հետախուզության արդյունքները եվ ստորերկրյա քաղցրահամ ջրերի շահագործելի պաշարների հեղինակային հաշվարկը (Արտաշատի շարժախմբի միջանկյալ հաշվետվությանը 1991-2002թ.թ. կատարած աշխատանքների մասին): Երևան-2002: ՀՀ ԵՖ:

Ինժեներ-երկրաբան՝



Դ.Առաքելյան



Համակցված գլխավոր հատակագիծ
Մ1:100

ՀԱՄԱՉԱՅՆՆԵՐԻ Ե: «Տրանսգազ» ՍՊԸ
COI ЛАСОВАНО: ООО "Трансгаз"

Տնօրենի տեղակալ
Зам. директора
Գեղարքունիքի մարզի ՍՊԸ-ի պետ
Нач. ОТД. СПОТ


Վ. Սարգսյան
Саргсян В.

Ա. Բոչարյան
Бочарян А.

| Հիմնությունների անվանացանկ | | |
|----------------------------|--|-------|
| Դիրք | Անվանում | Մանր. |
| 1 | Տեխնոլոգիական հանգույց | |
| 2 | Հարթակի զսիչների սպասարկման համար | |
| 3 | Մախաչափի շինություն | |
| 4 | Շվարթան փոխմիացման հանգույցի վրա | |
| 5 | Բետոնե հարթակի ԳՀԱՀ համար | |
| 6 | Օպերատորի սենյակներ | |
| 7 | Օժանդակ սենյակ №1 | |
| 8 | Օժանդակ սենյակ №2 | |
| 9 | Օժանդակ սենյակ №3 | |
| 10 | Սանհանգույց | |
| 11 | Սեպտիկ խոր | |
| 12 | Օժանդակ սենյակ №4 | |
| 13 | Գազահաշվիչի արկղ և հարթակ | |
| 14 | Հոր իտտավորիչի պահպանման տարողության համար | |
| 15 | Հենարաններ մոմի համար | |
| 16 | Տեղափոխվող շինություն բետոնե հարթակի վրա | |

Պայմանական նշաններ

- տարածքի սահմանագիծ
- ապամոնտավոր ցանցապատ (157.4 մ)
- մետաղական ցանցապատ դարպասով և դռնակով (152.5մ)
- ապամոնտավոր շինություններ
- ապամոնտավոր բետոնե հարթակներ
- վերջնական տեխնոլոգիական խողովակաշար
- ստորգետնյա տեխնոլոգիական խողովակաշար
- հենարաններ տեխնոլոգիական խողովակաշարի համար
- առնչվող տարածքի ծածկույթ 1400.0 մ²
- բետոնե հարթակ
- հիմքեր փականների տակ
- Հախագծվող ՄԳ-0.23 կՎ BBT
- Արտաքին լուսավորության մալուխ խողովակով խրամուղում
- Տեխնոլոգիական շինությունների էլ. մալուխ խողովակով խրամուղում
- Հախագծվող ՄԳ-96 Վ ABB
- Հախագծվող BBT
- Հախագծվող ՕԳ-96Վ, A-35
- Գոյ. ունեցող ՕԳ-96Վ, A-35
- Արտաքին լուսավորության հենարան մեկ լուսատուով
- Արտաքին լուսավորության հենարան երկու լուսատուով
- Հերտավոր պողպատ 25x4մմ
- Հերտավոր պողպատ 40x4մմ
- Անկյունավոր պողպատ 50x50x5մմ L=2մ
- Շանթարգել
- Անրատեղադրվող կաթոլային պաշտպանության կայան (ԿԴԿ)
- Հախագծվող էլեկտրամեկուսիչներ (BЭИ)
- BЭИ (ապամոնտավոր և տեղադրում)
- Հախագծվող հսկիչ-չափիչ կետ (ՀՉԿ)
- Հախագծվող պրոտեկտոր
- խողովակ՝ ստորգետնյա խողովակների կոտրված վիճակի չափման համար
- Հախագծվող ծայրային հենարան ՕԳ (մետ.)
- Ապամոնտավոր հենարան (մետ.)
- Գոյ. ունեցող է/ր հենարան
- Հեռուցման մատակարար խողովակ
- Հեռուցման հեռադարձ խողովակ
- Հեռուցման մատակարար վերջնական խողովակ
- Հեռուցման հեռադարձ ստորգետնյա խողովակ
- սեկցիա
- Հերտափեղկ
- Դեֆլեկտոր



| | | | |
|-------------------------------------|------|---|--------|
| 18-004-25 ԳՀ | | | |
| Արարատ ԳԲԿ-ի կապիտալ նորոգում | | | |
| Հնդհանուր բացատրագիր | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | ԱՆ | | 1 |
| Համակցված գլխավոր հատակագիծ, Մ1:100 | | "Գազարմո Արմենիա" ՓԲԸ Դիմենդառնային կապիտալ կենտրոն" մասնաձյուղ | |